

Իսկ Մեսիայի գալստեան թուականը:

Որչա՛փ երազատեսներ օրերով ու շաբաթ-
ներով, շարունակ գլուխնին խոնարհած են
Ձօհարին վրայ ճշգրիտ կերպով այդ թուա-
կանը մէջտեղ հանելու համար...

Մեսիայի գալուստն հրէային համար
կեանքի ու մահուան խնդիր է: Մարգարէներու
գարերէն ի վեր Իսրայէլը կը սպասէ անոր,

որպէսզի միանգամ ընդմիշտ վերջ գտնեն իր
տանջանքները: Այս ակնկալութիւնն է որ հրէ-
ական պատմութեան տուած է այդչափ խոր
բանաստեղծութիւն եւ ամէն հրէայ խորապէս
համոզուած է, թէ պիտի գայ օր մը, որ հնչէ
արդարութեան ժամը, եւ աշխարհի ամենա-
չարչարեալ ազգէն ծնի աշխարհի վրկէնը:

(Վերջը յաջորդով)

Կ'ուզէ՞ք մէկ անգամուան գին վճարել եւ մէկ ամբողջ ամիս
ծանուցում տալ

ՂՐԿԵՑԷՔ ԶԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

«ՀԱՅՐԵՆԻՔ» ԱՄՍԱԳՐԻՆ

որ հայ ընթերցասէր հասարակութեան սեղանին վրայ կը գտնուի
ու ձեռքէ ձեռք կ'անցնի մէկ ամբողջ ամիս:

Այս առաւելութեան հետ դուք պիտի գտնէք նաեւ ԴԻԻՐԱ-
ՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ:

HAIRENIK ASS'N

13-15 Shawmut St.,

Boston, Mass.